Հովհ. Մարգարյանի երեկոն

(կարդացի Հովիկի 95-ամյակի երեկոյին՝ Ճարտ. տանը տեղի ունեցած հանդեսին)

Մենք այս հանդեսին փութացինք ներկա լինել մի առանձին զգացումով, որը, անշուշտ, տարբերվում է նման այլ դեպքերից, առանց պարտադրման, միայն ու միայն սիրով ու հարգանքով, առիթի նկատմամբ խոր ակնածանքով:

Այլ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ այն նվիրված է Հովհաննես Մարգարյանին, մի պարկեշտ մարդու, մի ազնիվ անձնավորության, մի տաղանդավոր ճարտարապետի, որին հատուկ էր ուրիշներին վերաբերվել նույն ձևով, ինչպես այժմ մենք ենք վերաբերում նրա հիշատակին:

Նրա մարդկային բարեմասնությունները առանց դժվարության անդրադարձել են նրա ստեղծագործություններում՝ մաքուր, պարզ, հասկանալի, կատարված սիրով, որպես ինքնուրույն մտածողության արգասիք. և եթե որևէ աշխատանք ստեղծելիս իր մտապատկերում հայտնվել է ինչ որ նախօրինակ, ապա նա անհրաժեշտ տակտով հեռացել է նրանից, մնալով ինքնուրույն-օրիգինալ:

Երեսնական թվականներին և հետո հայ նոր ճարտարապետություն ստեղծող ռահվիրաներից էր Մարգարյանը, այն փոքրաթիվ շնորհալիներից մեկը, որ նաև օգտակար եղավ մեր արվեստի նոր սերնդի ստեղծման և դաստիարակման, հանուն նորանոր հաջողությունների:

Երեսնական, քառասնական, հիսունական թվականները հաջողությունների հասնելուց բացի, կյանքի կոչեցին որոշ նորույթներ, որպիսիք լիակատար գործադրություն չգտնելով, նախապատրաստություն հանդիսացան իրենցից հետո՝ նորանոր ստեղծագործությունների համար: Ուշադիր լինելու դեպքում որոշակի երևում են նորակառույցներում գործադրություն ստացած այն բոլոր նորույթները, որոնք արդեն ստեղծվել, գործադրության համար նախապատրաստվել էին նախորդ տասնամյակներում: Այդ ժամանակ ճարտարապետներից յուրաքանչյուրը ձգտում էր իր լուման մուծել մեր արվեստի նոր վերածնունդին, ձգտում էին չկրկնել, նորը բերել, և քանի որ

որպես անհատ անձնավորություններ միմյանցից տարբեր էին, այդպես էլ նրանց ստեղծագործությունները եղան տարբեր:

Համալսարանի տեխֆակից եկող ճարտարապետների խումբը (Սաֆարյան, Մարգարյան, Գրիգորյան, նաև Բախշյան, Հակոբյան) ստացել էին եվրոպական դասական և վերածննդի նյութերի ուսուցում, դրանով էլ սկսեցին իրենց գործունեությունը: Այդ նույն սկզբունքով Մոսկվայում, Պետերբուրգում, Բաքվում և Թբիլիսիում կրթություն ստացած հայ ճարտարապետները՝ սկսած Հալաբյանով, այդ թվում՝ Քոչար, Մազմանյան, Իսրայելյան, Սարապյան, Տիգրանյան և ուրիշներ, իրենց սկզբնական գործերում դրեցին իրենց հետ բերածը, հետո միայն, ոմանք միանգամից, մյուսները աստիճանաբար հակվեցին դեպի ազգայինը և այդ ուղղությամբ հասան հաջողությունների: Այդ էվոլյուցիան նույնությամբ անցան նաև նրանց մեծ նախորդները, այդ թվում և՛ Թամանյանը, և՛ Բունիաթյանը:

Մարգարյանի Հայէներգոյի շենքը ճշտորեն համապատասխանեց Աբովյան փողոցի կառուցապատման մասշտաբին, Կարի ֆաբրիկայի կամարակապ ընդարձակ աշխատասրահը օրինակ դարձավ Երևանի կենտրոնական շուկայի ներքին ընդարձակ առևտրական սրահի համար և այլն: Նույնպիսի դեր ունեցան Մարգարյանի նաև մյուս հիանալի, տաղանդով ստեղծված շինություններն ու համալիրները, որպիսիք մենք տեսանք կյանքում և բացված ներկա ցուցահանդեսում:

Այս հանդեսին նախորդող օրերին, նաև հիմա համեմատաբար տարիքավորներս Հովհաննես Մարգարյանի, միշտ սիրված ու հարգված Հովիկի մասին խոսելիս, բառացիորեն տեղափոխվում ենք նրա ապրած տարիները, հիշում նրա հետ ունեցած հանդիպումները, մոռանում ենք, որ անցել են տասնյակ տարիներ:

Մի անգամ տրոլեյբուսի նույն վագոնում Մարգարյանի հետ անցնում էինք Նալբանդյան փողոցով, խոսք բացվեց Քոչարի նախագծած շենքի [Նալբանդյան 104] կառուցման ընթացքի մասին (այն հսկել էր Մարգարյանը), հետո մի ուրիշը մի հատված շարունակել էր, չգիտեր ով, հարցրեց ես չեմ արդյո՞ք, իհարկե ես չէի, ինքը գոհ չէր: Այս

դեպքը և զրույցի շարունակությունը այնքան մտերմական էր, որ ինձ, անկեղծորեն, թվում է, թե 2-3 տարի առաջ էր:

Հովհաննես Մարգարյանի պայծառ հիշատակը թող միշտ մնա թարմ ու սիրելի:

19.12.96

Տ.Մ.

Նրա կարևոր կառույցները

«Կարի ֆաբրիկա» - հոյակապ կամարակապ աշխատասրահ, «Ծածկած շուկա-յին» կանխել էր:

Հայէներգոյի շենքը – քաղաքի, Աբովյանի կառուցապատման մասշտաբ:

Հրապարակի կառույց – չմասնակցեց, գերադասեց Ռադիոյի տունը:

Ռադիոյի տուն – Դոժերի պալատի (Վենետիկ) ճակատի մշակման սկզբունքը (ափսոսում էր, որ աշտարակը չկառուցվեց):

«Գրքի պալատը» Միքայել Մազմանյանի հետ – կառուցեց նախքան պատերազմը և պատերազմից հետո:

Նալբանդյան 104 – Գևորգ Քոչարի բացակայության պատճառով:

Վանաձորի (Կիրովականի) հրապարակի ներդաշնակ կառուցապատումը:

Կոնյակի գործարանը, անսամբլը Ներսիսյան Սերգեյը, դեգուստացիոնը (Արզումանյան):

Սասունաշենի ակումբը – արված է դասական հայկականով, յուրընտիր համա-չափություններով:

Արզնիի ջրաբուժական շինությունը (Նեկտարի հետ):